ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՀԱՅ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

(նախահոկտեմբերյան շրջան)

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Հայ ժողովրդի մեծ զավակ Միքայել Նալբանդյանը համառուսաստանյան հեղափոխական-դեմոկրատ էր, Ա. Հերցենի, Ն. Չերնիշևսկու զինակիցը, «Չերնիշևսկու դարաշրջանի» այն ականավոր մտածողը, գրողն ու քննադատը, որն իր ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության հարցը սերտորեն կապելով Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումների հետ, ղեկավար մասնակցություն ունեցավ 1860-ական թվականներին նախապատրաստվող համառուսաստանյան գյուղացիական հեղափոխությանը ցարական ինքնակալության դեմ, որի հետևանքը պետք է լիներ նաև կայսրության լծի տակ գտնվող ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայ աշխատավորության ազատագրումը։

Մ. Նալբանդյանի անվան ու ստեղծագործությունների հետ է կապվում հայ հասարակական-քաղաքական կյանքի ու գրականության, ազատագրական պայքարի պատմության մի ամբողջ դարաշրջան, որն սկսվում է անցյալ դարի 50—60-ական թվականներից։ Ա. Մյասնիկյանի պատկերավոր արտահայտությամբ, «Նալբանդյանը՝ դա մի խոշոր լույս է հայ իրականության երկնակամարի վրա, սկսած անցյալ դարի կեսից մինչև քսաներորդ հարյուրամյակը»[1]։

Չնայած հայ մեծ հեղափոխական-դեմոկրատի անունը Ն. Չերնիշևսկու անվան նման ցարական խավարամոլության պայմաններում արգելքի տակ էր, սակայն ժամանակի առաջավոր մարդիկ հիացմունքով էին խոսում նրա մասին։

Մ. Նալբանդյանի թաղման արարողությունը 1866 թ. ապրիլի 14-ին իր հայրենի Նոր Նախիջևանում վերածվում է մի զորեղ ցույցի՝ ընդդեմ հայ ռեակցիոներների և նրանց պաշտպան ցարական կառավարության։ Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը ապրիլի 16-ին հաղորդելով Մ. Նալբանդյանի մահվան մասին, հույս է հայտնում, որ «մի շքեղ և իրան արժանի շիրիմ զարդարե հայոց տարաժամ թառամած այս ծաղկի գերեզմանը»։ Նույն թվականին մամուլում հարց է դրվում հավաքել և հրատարակել Մ. Նալբանդյանի երկերը, կենսագրական տվյալներ են հաղորդվում նրա մասին։ 1866 թ. հուլիսի 15-ին Զմյուռնիայում լույս տեսնող «Ծաղիկ» հանդեսում արևմտահայ դեմոկրատական մտքի խոշորագույն ներկայացուցիչ Մ. Մամուրյանն ընդարձակ հոդված է տպագրում Մ. Նալբանդյանի մահվան առ-

[1] «Պայքար» (Երևան), 1923, № 12—13։

թիվ, որում մերկացնելով նրա հակառակորդներին՝ Հ. Ջամուռճյանի տիպի խավարամոլներին, պահանջում է Մ. Նալբանդյանի «դատապարտության պարագաները գիտենալ և քննել այն վճիռը, որով աքսոր գնաց»։ Բերելով «Ազատն աստվածի» մարտակոչ խոսքերը, Մ. Մամուրյանը գրում է. «Այս վսեմ և սպառնալից գոչումը, որ Նալբանդյանցի կենաց և մահու բոլոր խորհուրդը կպարունակե, իր մահարձանին վրա պետք է արձանագրել, ինչպես որ պետք է դրոշմվի ամեն հայ սրտի մեջ իբրև նվիրական կտակ մը, որին գործադրությունը ապագա սերնդին հանձնված է... շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսատու գաղափարները, որ հռետոր կանգնեցավ նա և որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորոտան թագակիր բռնավորներու գլխին վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ ու գլուխ այրին, տոչորին. վասն զի Նալբանդյանցը հավատքի մը համար, ճշմարտության և աղատության հավատքին համար զոհ ընկավ...»։ 1867 թ. հոկտեմբերի 15-ին նույն «Ծաղիկ» հանդեսում տպագրված «Մ. Նալբանդյանց—իր կենաց վերջին պարագաները» ծավալուն հոդվածում, Մ. Նալբանդյանին անվանելով «հանճարեղ և հայրենասեր անձ», հեղինակը նշում է, որ նա բանտարկվել է Ա. Գերցենի հետ գաղտնի նամակագրություն և հանդիպումներ ունենալու համար։

Բաֆֆին 1867 թ. լույս տեսած իր «Սալբի» վեպը խորին մեծարանքով նվիրելով «անմահ Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին», ավելացնում է. «...Քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունը ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը»։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման հենց սկզբից, սրա առաջին պրոպագանդիստները Մ. Նալբանդյանի ուղղության նկատմամբ ունեցած վերաբերմունքը անկյունաքար էին համարում տվյալ հասարակական-քաղաքական մտքի հասունության, նրա դասակարգային պատկանելության։

Ինչպես Վ. Բելինսկու, Ա. Գերցենի, Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի նկատմամբ ունեցած վերաբերմունքը Գ. Պլեխանովի, Վ. Ի. Լենինի համար չափանիշ էր Ռուսաստանում տվյալ ժամանակաշրջանի առաջավոր հայացքների գնահատման համար, այնպես էլ հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանին տված գնահատականը Բ. Կնունյանցի, Ս. Շահումյանի, Ա. Մյասնիկյանի և մյուսների կողմից դիտվում է որպես ջրբաժան գիծ ազատագրական-հեղափոխական պայքարի հորձանուտներում։

Մարքսիստական նալբանդյանագիտությունը հենց սկզբից ձևավորվում էր բուրժուանացիոնալիստական հոսանքների դեմ մղվող անհաշտ պայքարում։ Առանց այս սկզբունքից ելնելու չի կարելի ճիշտ ըմբռնել այն ասույթներն ու ուսումնասիրությունները, որ թողել են հայ մարքսիստները Մ. Նալբանդյանի մասին՝ սկսած XIX դ. վերջից։

Նախահեղափոխական տարիներին Նալբանդյանի մասին գրել են Ներ. Շահազիզը, Լ. Մանվելյանը, Վ. Փափազյանը, Ա. Տերտերյանը, Մ. Վարանդյանը, Դ. Անանունը, Կ. Կուսիկյանը, Ա-Դոն, Ա. Մյասնիկյանը, Թ. Ավդալբեգյանը, Ն. Պալյանը և ուրիշներ։ 1903—1906 թթ. Դոնի Ռոստովում լույս է տեսնում Մ. Նալբանդյանի երկերի ժողովածուն։

Ինչպես տեսնում ենք, Մ. Նալբանդյանի կյանքի ու ստեղծագործությունների մասին խոսել են տարբեր հասարակական-քաղաքական ուղղությունների և կուսակցությունների պատկանող մարդիկ։ Պարզ է, որ նրանցից յուրաքանչյուրը կփորձեր Մ. Նալբանդյանի կյանքն ու գործը մեկնաբանել յուրովի։

Մեր խնդիրը չէ այստեղ վերլուծել այդ տարբեր մեկնաբանումները, որոնք գրականության մեջ այս կամ այն առիթով քննարկված են։ Մենք ընդգծում ենք, որ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հետևողական ու անմիջական ժառանգները հանդիսացան առաջին հայ մարքսիստները, որ ինչպես ռուսական իրականության մեջ, այնպես էլ հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության անդաստանում մարքսիզմի նախորդները հեղափոխական-դեմոկրատներն էին—Ռուսաստանում Վ. Բելինսկին, Ա. Հերցենը, Ն. Չերնիշևսկին, Ն. Դոբրոլյուբովը, իսկ հայ իրականության մեջ՝ Մ. Նալբանդյանը։

Ե. Ղազարյանը «Մուրճ» ամսագրի 1894 թ. համարներում տպագրված «Անցյալի հիշատակը» հոդվածում, վերհիշելով իր և իր հասակակիցների պատանեկական ու երիտասարդական տարիները, նշում է, որ իրենց «կյանքն ու երջանկությունը» Վ. Բելինսկու, Ն. Դոբրոլյուբովի, Ն. Չերնիշևսկու, Դ. Պիսարևի, Ն. Շելգունովի, Մ. Նալբանդյանի, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Ն. Ուսպենսկու, Ի. Տուրգենևի գրվածքների ընթերցանության մեջ էր, որ այդ հեղինակները «Մեր մտավոր կյանքի լուսավոր փարոսներն էին... Դրանք են մեզ ներշնչել և՛ ազնիվ զգացմունք, և՛ բարձր գաղափար, և՛ հասարակական ձգտումներ, և՛ հավատ դեպի սուպագան, և՛ իդեալ մարդկային կյանքի»[2]։ Ե. Ղազարյանը հիշում է, որ «Սովրեմեննիկի» համարները կամ վերոհիշյալ հեղինակների գրվածքները իրենք որպես «մի թանկագին գանձ» ձեռքից ձեռք էին տալիս։

Հայ առաջին մարքսիստներից Գ. Ղարաջյանը (Արկոմեդ) նշելով, որ Մ. Նալբանդյանը «Մի առանձին և որոշ մեծություն է ներկայացնում մեր կյանքի սոցիալիստական պատմության մեջ», հիշում է Թիֆլիսի հեղափոխական նարոդնիկների կողմից 1884—1885 թթ. Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքի հեկտոգրաֆով հրատարակման և քաղաքում ու գավառներում տարածման փաստը[3]։

Ուշագրավ է, որ «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» իր անլեգալ օրգան «Ազատ Հայաստան» թերթի 1893 թ. հունիսի 23-ի առաջին համարում տպագրել է Մ. Նալբանդյանի կենսագրությունը։ Թերթի հրատարակիչներն էին Ա. Խաժակյանը, Ա. Խումարյանը և Ս. Մարտիկյանը, որոնցից վերջինները շուտով դարձան մարքսիստներ, ապա՝ ականավոր բոլշևիկներ։ Հ. Հակոբյանն իր «Ինքնակենսագրական նյութերում» գրել է, որ դեռևս Գանձակի գիմնազիայի 3-րդ դասարանում սովորելիս իր վրա մեծ ազդեցություն է թողել Մ. Նալբանդյանի «Ազատն աստված» բանաստեղծությունը։ «Արտագրելով այն ամբողջովին,—գրում է Հ. Հակոբյանը,—սիրեցի ընդմիշտ Նալբանդյանին, և այնուհետև այդ երգը դարձավ իմ ամենասիրելին բոլոր երգերից։

---

2 «Մուրճ», 1894, № 10, էջ 1473։

3 Գ ե ո ր գ Ղ ա ր ա ջ յ ա ն (Ս. Տ. Ա ր կ ո մ ե դ), Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 26։

խոստովանում եմ, այդ բանաստեղծությունն էր, որ առաջին անգամ գիտակցորեն խանդավառեց իմ հոգին, մեջս ներշնչեց ազատության գաղափարը ու ինձ համար այնուհետև դարձավ պաշտելի»[4]։

Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական գիծը, հայ ազատագրական շարժումը ռուսաստանյան և համաեվրոպական շարժումների հետ միահյուսելու վերաբերյալ նրա գաղափարներն ու գործնական պայքարը խոշոր ազդեցություն են ունեցել հայ հեղափոխականների գործունեության վրա։ Եվ ընդհակառակը, հայ ազգային-ազատագրական շարժման այն ուղղությունը, որը կողմնորոշվում էր դեպի եվրոպական տերությունները, հիմք է դառնում բուրժուական-ազգայնական կուսակցությունների ձևավորման համար։

Առաջին ուղղության կողմնակիցների համար ղեկավար սկզբունքներ էին «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում 1862 թ. Մ. Նալբանդյանի գրած հետևյալ մարգարեական խոսքերը. «Ռուսիո մեջ խմորված ազատությունը, համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել, վասնզի ազատությունը հողի վրա կհիմնվի, քանզի ոչ միայն ինքը ռուսը կուզե իր ազատությունը, այլ՝ կքարոզե թե Լեհաստան, Ֆինլանդիա, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է որ ազատ և անկախ ըլան... Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մե՜ծ խորհուրդ ունի...»[5]։

Հիշենք այս խոսքերից 32 տարի հետո Ֆ. Էնգելսի՝ հայ առաջին սոցիալ-դեմոկրատ Հ. Աթաբեկյանցին գրած պատասխան նամակի եզրակացությունը. «Բայց եթե անկեղծորեն ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը Թուրքերից, ինչպես նաև ռուսներից հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը»[6]։

Այսպիսով, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող ժողովուրդների ազատագրությունը կապվում էր ցարական կայսրության տապալման հետ։ Հենց այդ վեհ գործին էին նվիրել իրենց ողջ կյանքը Մ. Նալբանդյանը, իսկ ապա հայ մարքսիստները։ Վերոհիշյալ դրույթները չէին համընկնում ո՛չ զանազան տեսակի լիբերալների, ո՛չ հընչակյանների, ո՛չ դաշնակցականների և ո՛չ էլ «սպեցիֆիկների» ու հայ էսէռների տեսակետներին, որոնք հանձին Մ. Նալբանդյանի տեսնում էին սոսկ լուսավորչի և ազգային-ազատագրական շարժման գործչի։

Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի, Ս. Շահումյանի ասույթներով և մասնավորապես Ա. Մյասնիկյանի, ինչպես նաև Թ. Ավդալբեգյանի երկերով սկիզբ առան Մ. Նալբանդյանի ստեղծագործական ժառանգության և հասարակական-քաղաքական գործունեության մարքսիստական ուսումնասիրությունները, որոնք հետագայում զարգացվեցին և գիտական բարձր մակարդակի հասցվեցին Ա. Հովհաննիսյանի, Ա. Կարինյանի, Դ. Տեր-Սիմոնյանի և այլոց հետազոտություններում։ Նրանք էլ հենց հանդիսանում են սովետական նալբանդյանագիտության անկյունաքարերը, որոնք մի հոյակապ շենքի վերածվեցին սովետահայ նալբանդյանագետների հիանալի ջոկատի բազմերանգ աշխատություններով։

---

4 Հակոբ Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1958, էջ 22։

5 Մ. Նալբանդյան, Երկ, հ. III, էջ 61։

6 К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд. 2, т. 39, էջ 271։

Դժբախտաբար հայ մարքսիստների հրապարակված ժառանգությունը հարուստ չէ Մ. Նալբանդյանի մասին հիշատակություններով, իսկ նրանցից ոմանց (Ա. Մելիքյան, Բ. Ղարիբջանյան և այլն) անտիպ գործերը, որոնցում հետաքրքիր դիտողություններ կան նաև Մ. Նալբանդյանի մասին, դեռևս մնում են արխիվների սեփականությունը։

Դեռևս անցյալ դարի վերջին Գ. Ղարաջյանը, Ա. Խումարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Ղուրաբյանը, Ս. Շահումյանը տեղյակ էին Մ. Նալբանդյանի կյանքին ու ստեղծագործություններին։ Իրենց ղեկավարած խմբակների պարապմունքներում նրանք հաճախակի վկայակոչում էին Մ. Նալբանդյանին։ Մարքսիզմի հայ պիոներները հանձին Մ. Նալբանդյանի տեսնում էին Ռուսաստանի նորագույն հեղափոխական ավաղանում մկրտված երիտասարդության նախորդին։

Ս. Շահումյանի աշակերտական տարիների ընկեր, հետագայում ականավոր գրող Մ. Արաղին հիշում է, որ 1890-ական թվականներին այն է՝ «ռեակցիայի տարիներին խորհրդավոր լռություն էր տիրում Չերնիշևսկու, Գերցենի և մեր Նալբանդյանի շուրջը, քանի որ նրանց գրվածքները արգելված էին։ Բայց այդ լռությունն ավելի մեծ կարոտ էր ստեղծում դեպի այդ նվիրական անունները, որոնց մասին մենք լսում էինք հաղվագյուտ իմացողներից»[7]։ Ս. Արաղին այստեղ նկատի ունի Ս. Շահումյանին, որը Թիֆլիսի «ծիածան» աշակերտական խմբակի պարապմունքներում և իր մտերիմ ընկերների հետ ունեցած զրույցներում խոսում էր ռուս հեղափոխական-դեմոկրատների, նրանց զինակից Մ. Նալբանդյանի մասին։

Հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ մարքսիստական փուլի սկզբնավորումն ազդարարող փաստաթուղթ է 1902 թ. մայիսի 19-ին Ղ. Աղայանի հոբելյանական հանդեսին Ս. Շահումյանի արտասանած ճառը, որը ուժեղ տպավորություն թողեց հանդեսի մասնակից հայ նշանավոր գործիչների վրա։ Այդ պատմական ճառում Ս. Շահումյանն իրեն հատուկ հեղափոխական կրքով շարադրեց հասարակական խնդիրների մասին հայ մարքսիստ-լենինյանների հայացքները։ Նա կոչ էր անում ամենից առաջ կռիվ հայտարարել այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում էին ժողովրդի ազատ, բնական զարգացումը։ «Ազգային կուլտուրական գործունեության փոխարեն,— ասաց Ս. Շահումյանը,— մենք քաղաքական-հեղափոխական կռիվ ենք քարոզում. բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա դրում ենք առայժմ.

«Կռիվ բռնակալության դեմ,
Կեցցե՛ քաղաքական ազատությունը»[8]։

---

[7] Խ. Հ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան. կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 45։

[8] Ստեփան Շահումյան, Երկ, հ. 1, Երևան, 1975, էջ 38։

Այս դիրքերից քննադատելով ժամանակակից լիբերալներին, նրանց քաղաքական երկչոտությունը. Ս. Շահումյանը որոշակի բաժանման գիծ է անցկացնում նրանց և Մ. Նալբանդյանի, ինչպես նաև Գ. Արծրունու միջև, հայտարարելով «Մի համարձակվեք նույնիսկ Նալբանդյանի ու Արծրունու հաջորդներ անվանել Ձեզ։ Եթե նրանք այժմ կենդանի լինեին, ամենավատ դեպքում կկոտրեին իրենց գրիչները և չէին համաձայնվի երբեք Ձեզ նման գրողներ լինել»[9]։

Նշենք, որ այստեղ Մ. Նալբանդյանի և Գ. Արծրունու անունների միատեղ հիշատակումը բնավ չի նշանակում, որ Ս. Շահումյանը նույնացնում է նրանց որպես հայ հասարակական մտքի ու շարժման գործիչների։ Ամենևին ոչ։ Այստեղ խոսքը հայ ժողովրդի ազատագրության համար քաղաքական ակտիվ գործունեության մասին է։

1903 թ. Գ. Արծրունու մահվան տասնամյակի առթիվ հրապարակված իր «Մի քանի խոսք «Մշակ-ի» մասին» հոդվածում Բ. Կնունյանցը ևս խիստ տարբերություն է դնում Գ. Արծրունու և նրան հաջորդող հրապարակախոսների միջև, որոնք «Մշակը» դարձրեցին ռեակցիոն բուրժուական տեսակետների, հայկական նացիոնալիզմի ու ցարական կառավարության քաղաքականության պաշտպանության օրգան։

Սկզբնական շրջանում (1872—1892), երբ «Մշակի» խմբագիրը Գ. Արծրունին էր, թերթը պրոպագանդում էր ժամանակի համար առաջադեմ, զարգացման բուրժուական ուղի, Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը։ Այդ էլ նկատի ունենալով Բ. Կնունյանցը Գ. Արծրունուն անվանում է «հմուտ և բարձր տաղանդի տեր հրապարակախոս», «Մշակի» շնորհալի ղեկավար»[10]։

Այս տեսակետից կարևոր փաստ է, որ «Մշակի» հրատարակման գործում Թիֆլիսում Գ. Արծրունուն մեծ օգնություն է ցույց տվել Ն. Ջերնիշևսկու հետևորդ, վրաց ականավոր հասարակական գործիչ Ն. Նիկոլաձեն[11], որն ամենայն հավանականությամբ XIX դ. 60-ական թվականներին մոտ հարաբերությունների մեջ է եղել Մ. Նալբանդյանի հետ։

1902 թ. Լոնդոնում հրատարակվող «Ժիզն» դրական, գիտական և քաղաքական հանդեսի հուլիսյան համարում «ЯНЦЪ» ստորագրությամբ տպագրվում է «Հայկական հարցի շուրջը» ծավալուն հոդվածը, որում բնութագրվում են Խ. Աբովյանը, 60—70-ական թվականների հայ հրապարակախոսները, Մ. Նալբանդյանը, Գ. Արծրունին, Բաֆֆին, Ռ. Պատկանյանը։ Հոդվածի հեղինակը հայ մարքսիստ է[12], քաջատեղյակ հայ հասարակական-քաղաքական կյանքին ու գրականությանը՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակաշրջանում։

Խոսելով Խ. Աբովյանի խորը ժողովրդականության մասին, հեղինակը նշում է, որ նրա «Վերք Հայաստանին» սկիզբ է դրել ազգային վերածնու-

9 Նույն տեղում, էջ 32։

10 Բ ո գ դ ա ն Կ ն ո ւ ն ե ա ն ց, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 33։

11 Г. Д. Д ж а в а х а ш в и л и, Нико Николадзе и русская журналистика, Тбилиси, 1978, էջ 125։

12 «Ժիզնը» 1899 թվականից «լեգալ մարքսիստների» օրգանն էր, իսկ 1902 թ. ապրիլից՝ «Ժիզն» սոցիալ-դեմոկրատական խմբակի։ Ենթադրվում է, որ հիշյալ հոդվածի հեղինակը կարող են լինել Բ. Կնունյանցը կամ Ա. Ջուրաբյանը։

թյան հսկայական գրականության։ XIX դ. 60-ական թվականների հայ հրապարակախոսների և հատկապես Մ. Նալբանդյանի ծառայությունը հեղինակը համարում է այն, որ նրանք սիրելով ժողովրդին, լուսավորում էին նրան, արտակարգ հաջողությամբ պայքարում կղերականության դեմ։ 1860-ական թվականների գրողների մեջ, նշված է հոդվածում, հատուկ տեղ ուներ Մ. Նալբանդյանը՝ «հայ առաջին սոցիալիստը, որն իր երկերում զարգացնում էր իսկական ազատության գաղափարը՝ հենված համընդհանուր աշխատանքի և նրա արդյունքներից համընդհանուր հավասար օգտվելու վրա։ Այդ բանի համար էլ նա ծանոթացավ Պետրոպավլովյան բերդի բանտախցերին։ Նալբանդյանի ազդեցությունը ժողովրդի վրա զգացվում է մինչև մեր օրերը...»։

Բարձր գնահատելով Գ. Արծրունու, նրա խմբագրած «Մշակի», Ռաֆֆու, Գամառ Քաթիպայի (Ռ. Պատկանյան) գործունեությունը, հոդվածագիրը միաժամանակ նշում է, որ «Մշակն» այժմ գլորվել է մինչև սովորական տափակ բուրժուական թերթի աստիճանի։

Հոդվածում հայ ժողովրդի ազատագրության հարցը կապվում է բանվորական հեղափոխական շարժումների, սոցիալիստական գաղափարների հաղթանակի հետ։

Անշուշտ Մ. Նալբանդյանն ու Գ. Արծրունին ղեկավարել են հայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր հոսանքներ՝ Մ. Նալբանդյանը հեղափոխական-դեմոկրատական ուղղությունը, Գ. Արծրունին՝ լիբերալ բուրժուականը։

Մարքսիստական նալբանդյանագիտության հիմնական սկզբունքների ամբողջական շարադրանքի առաջնության պատիվը պատկանում է Ա. Մյասնիկյանին։ 1910 թ. Մոսկվայի համալսարանի ուսանող եղած ժամանակ բոլշևիկ Ա. Մյասնիկյանը հրապարակային դասախոսություն է կարդում, որում մարքսիստական դիրքերից լուսաբանում է Մ. Նալբանդյանի գործունեությունը՝ որպես հեղափոխական դեմոկրատի, ռուս հեղափոխական դեմոկրատների բարեկամի ու զինակցի։

1910 թ. նոյեմբերին «Հորիզոն» թերթում տպագրվում է Ա. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան (նկատողություններ ծննդյան 81-ամյակի առթիվ)» ծավալուն հոդվածը։ Նույն թվականի դեկտեմբերին Մոսկվայից նա նամակ է գրում «Մշակի» խմբագրությանը՝ իր «Միքայել Նալբանդյան» ռեֆերատը Առ-Զենի կողմից աղավաղվելու մասին։ 1914 թ. ապրիլին «Մշակում» հրապարակվում է նրա «Խոշոր հայ գրողի հիշատակին» հոդվածը՝ Մ. Նալբանդյանի մասին։

Դժգոհելով «Հորիզոնի» էջերում իր հոդվածն աղավաղելու դեմ, Ա. Մյասնիկյանը 1913 թ. հունվարի 27-ի նամակում գրում է. «Հորիզոնում» այդ հոդվածը տպագրված է ահագին կրճատումներով, այժմ վերջիններս կվերականգնեմ և հոդվածն էլ կփոփոխեմ»։ 1919 թ. Մոսկվայում առանձին գրքույկով լույս է տեսնում Ա. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան» աշխատությունը, իսկ 1923 թ. «Պայքար» հանդեսում «Միք. Նալբանդյանը և հայ ինտելիգենցիան» հոդվածը[13]։

Բուրժուական քննադատները Մ. Նալբանդյանին ներկայացնում էին սոսկ որպես բանաստեղծ և հրապարակախոս, Ս. Նազարյանցին հետևող լիբերալ գործիչ։

---

13 «Պայքար», 1923, № 12—13։

Դաշնակցական Մ. Վարանդյանը, որին Ս. Շահումյանը անվանել է «տիեզերական թութակ», Մ. Նալբանդյանին բնութագրելով որպես սովորական աղգային-լիբերալ, գրել է, որ նա «ո՛չ գիտության փայլուն ներկայացուցիչ էր, ո՛չ մանավանդ տնտեսագետ ընկերաբան։ Նրա փիլիսոփայական աշխարհայացքը, որ կատաղիորեն մերժում է վերացականն ու մտահայտը իբրև «խաբեություն», հեռու չի անցնում կոշտ ու խոպան նյութապաշտությունից և ուտիլիտարիզմից»։

Հեղափոխական-դեմոկրատին տված նման բնութագրումների դեմ վճռականորեն ու հիմնավոր կերպով հանդես է եկել Ա. Մյասնիկյանը և փաստերով ցույց ավել, որ Մ. Նալբանդյանն առաջին հերթին մատերիալիստ փիլիսոփա է, հեղափոխական գործիչ, որ հայկական լիբերալիզմը չէր կարող ծնել նրա նման պրոգրեսիվ միտք և բմբոստ ոգի, դիտական ուժ։ Մ. Նալբանդյանի «հասարակական դեմքը,— գրել է Ա. Մյասնիկյանը,— պայքզվել է ռուսական կյանքի և ռուս մտածողների շնորհիվ, իսկ հայ իրականությունը ուղղություն է տվել նրան, նախորոշել է նրա իդեոլոգիան։ Նալբանդյանը ամենից առաջ և ամենից շուտ հայ կյանքի ծնունդ է»[14], հայ դեմոկրատիայի՝ «հարատևհարված մասսայի», «հասարակ ժողովրդի»[15]։

Չժխտելով Ս. Նազարյանի ու Գ. Արծրունու դերը հայ ազատագրական շարժման մեջ, Ա. Մյասնիկյանն ընդգծել է, որ նրանք հայ ազատամտականներ էին, մինչդեռ Մ. Նալբանդյանը հայկական վերածնության պատգամաբերն էր։ Չնայած նրանց միջև եղած արյունակցական կապերին, գրել է Ա. Մյասնիկյանը, դա չի խանգարում այդ երկու երևույթներն իրարից տարբերել. «Մեր վերածնությունը,— ընդգծել է Ա. Մյասնիկյանը,— մոտենում է ռուսական լուսավոր դարաշրջանին՝ Բելինսկիների, Չերնիշևսկիների էպոխային։ Այնինչ լիբերալիզմը, բուրժուազիայի զուտ իդեոլոգիան լինելով, ունի իր որոշ տեղն ու ժամանակը։ Վերածնությունը մեզ մոտ լիբերալիզմի նախադուռն է եղել, նրա շկոլան։

Միևնույն ժամանակ այնտեղից դուրս են եկել այնպիսի մտքեր, որոնք երբեք չեն կարող ճաշտվել բուրժուական մտածողության ու լիբերալական տեսլագիտության հետ»[16]։

Սա լիարժեք մարքսիստական հարցադրում է, լիովին համապատասխան Ֆ. Էնգելսի այն դիտողությանը, որ նա արել է՝ վերլուծելով XVIII դ. մատերիալիզմի էությունը։ Լուսավորիչներին հատուկ էր մի գիծ, նշել է Ֆ Էնգելսը, նրանք «ցանկանում են ազատագրել ոչ թե մի որոշ դասակարգ, այլ ողջ մարդկությունը»։

Մ. Նալբանդյանի և մյուս գործիչների գնահատականին Ա. Մյասնիկյանը մոտենում է դեռևս 1897 թ. «Տնտեսական ռոմանտիզմի բնութագրության շուրջը» աշխատության մեջ Վ. Ի. Լենինի ընդգծած այն սկզբունքից, որ «պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ինչ չեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք, ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»[17]։

---

14 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 35։

15 Նույն տեղում, էջ 36։

16 Նույն տեղում, էջ 23։

17 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 220։

Մ. Նալբանդյանի գործունեության մեջ Ա. Մյասնիկյանը տարբերում է երկու շրջան՝ մինչև 1859 թ. «Հյուսիսափայլի» շրջանը, երբ նա լուսավորիչ դեմոկրատ էր, շափավոր Ս. Նազարյանցի մարտնչող զինակիցը և 1859 թ. հետո, երբ Ռուսաստանում և արտասահմանում ծանոթանալով, կապեր հաստատելով Ա. Բակունինի, Ա. Գերցենի, Ն. Օգարևի, Ն. Չերնիշևսկու և ուրիշների հետ, շրջադարձ է կատարում դեպի հեղափոխական դեմոկրատիզմը։

Ի հակադրություն հայ բուրժուական տեսակետների, Ա. Մյասնիկյանը Մ. Նալբանդյանի գործունեության երկրորդ շրջանը սերտորեն կապում է ռուս հեղափոխական-դեմոկրատական մտքի ու անձամբ Վ. Բելինսկու և Ն. Չերնիշևսկու նրա վրա ունեցած ազդեցության հետ։ Չէ՞ որ նա «ենթակա է եղել Բելինսկու և Չերնիշևսկու ազդեցության. իսկ այս վերջինները ժամանակակից դիալեկտիկային ու մատերիալիզմին մոտ են կանգնած եղել. մանավանդ Չերնիշևսկին»[18],— գրում է Ա. Մյասնիկյանը։

Բնորոշելով Մ. Նալբանդյանի աշխարհայացքի դասակարգային ելակետը, Ա. Մյասնիկյանը նշում է, որ նա կանգնած է եղել իր ժամանակի ասենադեմոկրատական խավի՝ հասարակ ժողովրդի շահերի տեսակետի վրա և իր պայքարի նպատակն է համարել «ամեն ինչ ժողովրդի համար և ամենայն ինչ նրա միջոցով»։ Մ. Նալբանդյանի ամենալավ երկը Ա. Մյասնիկյանը համարում է «երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» դիրքը, որը որոշակի արտահայտությունն է նրա հասարակական-փիլիսոփայական աշխարհայացքի։ Ոգեշնչություն հանելով Հեգելի դիալեկտիկայից,— գրում է Ա. Մյասնիկյանը,— Նալբանդյանը անցնում է Ֆոյերբախի մատերիալիզմին։ «Դիալեկտիկական մեթոդը Նալբանդյանը կիրառում է կոնկրետ օրինակներով, պատմական երևույթների կյանքում»։ «Մենք հեռու ենք, անշուշտ, ասելուց,— շարունակում է Մյասնիկյանը,— թե Նալբանդյանի մատերիալիզմը կամ դիալեկտիկան եղել են անշեղ ու հարազատ, նմանապես և նրա՝ Հեգելի ու Ֆոյերբախի ըմբռնումը, այնտեղ ունի նա թերություններ ու սխալներ, բայց հարցը դրանում չէ։ Կարևորը այն է, որ 60-ական թվականների մի հայ հրապարակախոս կարողացել է վարակվել դիալեկտիկայով ու մատերիալիզմով։ Ավելին, այդ վարակումը նրան տարել է հեռուն»[19]։

Մ. Նալբանդյանի փիլիսոփայական հայացքներին Ա. Մյասնիկյանի տված այս գնահատականը արդյոք համահնչուն չէ 1912 թ. Ա. Գերցենին տված լենինյան այն գնահատականին, որ նա «ընդհուպ մոտեցավ դիալեկտիկական մատերիալիզմին և կանգ առավ պատմական մատերիալիզմի առաջ»[20]։

Խոսելով Մ. Նալբանդյանի քաղաքական թեորիայի մասին, Ա. Մյասնիկյանը նշել է, որ նա կողմնակից է եղել հեղափոխական տակտիկային, բռնության միջոցով տիրող կարգերը փոփոխելուն։ «Նալբանդյանը,— գրել է նա,— գիտե, որ կա տնտեսական անհավասարություն, ուստի և դասակարգային բաժանումներ. դասակարգային բաժանումը առաջ է բերում կռիվ, որ պիտի լուծվի «փոթորիկներով», որի շնորհիվ «բոլոր երկրագնդի վրա խոստովանելու է հավասար իրավունքը»։

Քննարկելով Մ. Նալբանդյանի հասարակական հայացքները, Ա. Մյասնիկյանը նրանց ելակետն է համարում տնտեսական թեորիան, որի անկյունա-

18 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 33։
19 Նույն տեղում, էջ 30, 31։
20 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 21, էջ 316։

քարը երկրագործությունն է, հողի համայնացումը։ Ա. Մյասնիկյանն այս որակում է որպես ագրարային սոցիալիզմ, որը ոչ իրական է, ուտոպիստական։ «Միքայել Նալբանդյանը ուտոպիստ է,— գրում է Ա. Մյասնիկյանը,— և եթե կարելի է այսպես ասել դրական ուտոպիստ, որովհետև նրա ժամանակ ու պայմաններում միմիայն ուտոպիայի միջոցով հնարավոր էր հասարակական իդեալ ծրագրել. բացի այդ նա մեկնում էր գիտությունից։ Եվ ուտոպիստ Նալբանդյանի արժանիքը նրանում էր, որ նա՝ ըմբռնելով իրերի ընթացքը. նախագուշակեց և նախորոշեց նրանց ապագա զարգացումը. եթե այդ դիագնոզը սխալ դուրս եկավ, կրկնում ենք, մեղքը օբյեկտիվ պայմաններինն է»[21]։

Այստեղ ևս Ա. Մյասնիկյանը հետևում է Ն. Չերնիշևսկուն և ռուս այլ հեղափոխական-դեմոկրատներին Վ. Ի. Լենինի տված այն գնահատականներին, որ նրանք ուտոպիստ-սոցիալիստներ էին և երազում էին սոցիալիզմին անցնել գյուղացիական համայնքի միջոցով, քանի որ XIX դ. 60-ական թվականներին նրանք չէին կարող տեսնել, որ միայն կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն է ընդունակ ստեղծել նյութական պայմաններ և հասարակական ուժ՝ սոցիալիզմին անցնելու համար։

Որպես մարքսիստ-լենինյան, Ա. Մյասնիկյանը բացահայտում է Մ. Նալբանդյանի հասարակական-քաղաքական մտայնության սահմանափակությունը, հակասությունները, որոնք արդյունք էին նրա ժամանակի պատմական դարաշրջանի ու միջավայրի։

Ուտոպիական սոցիալիզմը մինչմարքսյան բոլոր հեղափոխական-դեմոկրատների պատմական սահմանափակությունն էր։ Ազատության ուղին տեսնելով գյուղացիական հեղափոխության և հողագործական համայնքի ստեղծման մեջ, երկրագործությունը համարելով միակ ուղիղ ճանապարհը, Մ. Նալբանդյանը ելնում էր հեղափոխական-դեմոկրատական մինչմարքսյան սկզբունքից։ Միանգամայն ճիշտ է նշել ակադ. Ա. Հովհաննիսյանը, որ «անգիտանալ Նալբանդյանի մտածողության մեջ կատարված բեկումները և երբեմն նույնիսկ նրա հասարակական-քաղաքական առանձին վարանումներն ու խոտորումները իր իսկ պտշապանած առաջավոր գծից, կնշանակեր քերել ժամանակի ու միջավայրի նստվածքը նրա վրայից, չհասկանալ նրա գործունեությունը պատմական իր կապերի ու փոխանցումների մեջ, չըմբռնել նրան իր կյանքի ու գործունեության կենդանի դինամիկայի մեջ»[22]։ Նալբանդյան-փիլիսոփային, Նալբանդյան-տնտեսագետին, Նալբանդյան-հրապարակախոսին, Նալբանդյան-բանաստեղծին իր ժամանակի մեջ ամբողջական ուսումնասիրման այսպիսի օրինակ է հենց իր՝ մեծավաստակ մարքսիստ-գիտնականի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր ուսումնասիրությունը, Նալբանդյանագիտության այդ կաղնին, որի փարթամ ճյուղերը մենք տեսնում ենք սովետական ուսումնասիրողների բազմաթիվ գործերում։

Հայ մարքսիստները ոչ միայն ընկալում էին Մ. Նալբանդյանի գրական ժառանգությունը, այլև ելնելով նոր ժամանակներից և լենինյան աշխարհայացքից, քննադատաբար օգտագործում էին այն։

---

21 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 38։

22 Աշոտ Հովհաննիսյան, Միքայել Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ի, Երևան, 1955, էջ 8։

Լիովին համապատասխան լենինյան պահանջներին Ա. Մյասնիկյանը Մ. Նալբանդյանի պատմական արժանիքը համարում է այնքան մեծ, «որքան երկար է այն տարածությունը, որ բաժանում է մեզ Նալբանդյանի էպոխայից. այդ արժանիքը այնչափ բարձր է, որքան որ ներկայումս քառակուսի գլխի տեր մարդիկ շարունակում են որոճալ ագրարային սոցիալիզմը, իմաստալի՝ վաթսունական թվականներին և անհեթեթ՝ մեր օրերում»[23]։

«Պայքար» հանդեսում տպագրած իր «Միքայել Նալբանդյանն ու հայ ինտելիգենցիան» հոդվածում Ա. Մյասնիկյանը, գարգացնելով իր տեսակետները Մ. Նալբանդյանի մասին, նշել է, որ նա «...մոտեցել է ժամանակակից մատերիալիզմին: Սա մի խոշոր նվաճում է եղել նրա կողմից։ Ուրեմն, այսպիսով նա երես է դարձրել կրոնականությունից, միջնադարականությունից. մետաֆիզիկայից և փարվել է իսկական գիտության, այն իդեոլոգիային, որը համապատասխանում է արդի մարդկության մեծամասնության կամքին, ձգտումներին, շահերին... նա հեղափոխական էր իր մտքով ու իր գործերով։ Որպես հեղափոխական էլ նա մեռավ... Նալբանդյանը բարեկամն է հայ պրոլետարիատի և գյուղացիության...»[24]։

Թիստ կարևոր են Ա. Մյասնիկյանի այն դիտողությունները, որ Մ. Նալբանդյանը հեղափոխական ճանապարհով էր առաջարկում լուծել ոչ միայն արևելահայերի ազատության, այլև արևմտահայերի անկախության պրոբլեմը, որի «ուղղությամբ նա աշխատանք է տարել Լոնդոնում՝ հեղափոխականների շրջաններում»[25]: Այս հարցը ևս Մ. Նալբանդյանը կապում էր Ռուսաստանյան հեղափոխության հաղթանակի հետ։ Նա ելնում էր այն փաստից, որ «հայերը ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին»։ Մ. Նալբանդյանը գտնում էր, որ ազգային-ազատագրական պայքարը պետք է գործակցի հեղափոխական շարժումներին։

Մ. Նալբանդյանը մեծ։ հմայք ու հեղափոխական զինակիցներ ուներ նաև արևմտահայության շրջանում. «Ես առաջին անգամ,— գրել է Գ. Ղարաշյանը,—8—9 տարեկան հասակիս, այսինքն 60 տարի առաջ, լսել եմ և անգիր սովորել «Ազատն աստվածը» մի տաճկահայ երգեցողության ուսուցչից։ Իմ մանկական հիշողություններից մինչև այժմ դուրս չի գալիս «Ֆեսը» գլխին տաճկահայ երիտասարդ ուսուցչի պատկերը, որի հուժկու խրոխտ ձայնով և «հեղափոխական» շեշտով երգված «Ազատն աստվածը» խոր տպավորություն էր թողնում մեզ՝ փոքրահասակ մանուկներիս վրա»[26]։

Մ. Նալբանդյանը սերտ կապեր էր հաստատել արևմտահայ առաջավոր դեմոկրատ գործիչներ Ս. Ոսկանյանի, Հ. Սրվաճյանի, Ս. Թագվորյանի և ուրիշների հետ, որոնք Մ. Նալբանդյանին բարձր էին գնահատում և՛ նրա կենդանության ժամանակ, և՛ մահվանից հետո։

Հայտնի է, որ 1867 թ. մարտին Կոստանդնուպոլսի «Արևելյան թատրոնում», որին վեց տարի առաջ ճառով ողջունել էր Մ. Նալբանդյանը, Մ. Սեբեֆճյանի «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունը Պ. Ադամյանի մասնակցությամբ բեմադրելուց հետո ներկայացվում է մի տեսարան՝ նվիրված Մ. Նալ-

---

23 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 41։
24 «Պայքար», 1923, № 12—13, էջ 1—2։
25 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 40։
26 «Դրական շարաթ», հավելված «Պրոլետարի», Թիֆլիս, 1929, № 44—45։

բանդյանի հիշատակին։ Բեմում պատկերվում է սիբիրյան ձյունապատ դաշտում մենավոր մի շիրիմ, որտեղից բարձրանում է Մ. Նալբանդյանի «ոգին» և արտասանում «Ազատն ստված» բանաստեղծությունը։ Այնուհետև Մ. Սեւեֆճյանը ճառ է արտասանում ցարական միապետության դեմ[27]։

Ա. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրության շատ մտքեր դեռ այն ժամանակ պաշտպանություն գտան հայ մտավորականների մոտ։ 1913 թ. Մ. Նալբանդյանի մասին պատմագրական վերլուծություն է հրատարակել Թ. Ավդալբեգյանը։ «Լույս տեսած նոր ուսումնասիրություններին ծանոթանալուց հետո,— գրում է իր գրքույկի առաջաբանում հեղինակը,— տեսնելով որ մեր լավատես ու այլահավան ենթադրությունները չեն իրականացած, և նկատելով, որ Նալբանդյանի մասին տարբեր բանակներից արտահայտված թյուր կարծիքների վիճակը հորդանալու վրա է, այլև կամենալով մերովսանն հարգել հայ Գրակքոսի նվիրական հիշատակը նրա գլխավոր երկի հրատարակության հիսունամյակի (1862—1912) առթիվ,— վստահացանը ընթերցողների առաջ դնելու մեր այս թռուցիկ ուսումնասիրությունը»[28]։

Թ. Ավդալբեգյանը իր վերլուծության նպատակն է համարում պարզել, թե ինչ դասակարգային ոգի է իշխում Մ. Նալբանդյանի հայացքների մեջ։ Նա հենց սկզբից նշում է, որ իր աշխատության մեջ Մ. Նալբանդյանի մասին հայտնած մտքերից մի քանիսը ավելի առաջ արտահայտված են եղել հայ մամուլի ու գրականության մեջ, առանձնապես Ա. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան» հոդվածում։

Թ. Ավդալբեգյանի աշխատությունը 1913 թ. գարնանը ցարական գրաքննության կարգադրությամբ ոստիկանության կողմից գրավվել է հենց Վաղարշապատի տպարանում՝ դեռ չտետրած վիճակում։ Սակայն նրա մի քանի գլուխներ որոշ լրացումներով, որպես առանձին հոդվածներ 1913—1914 թթ. հրապարակվում են ժամանակակից մամուլում։ Միայն 1928 թ. Մ. Նալբանդյանի ծննդյան հարյուրամյակի նախօրյակին հեղինակը վերահրատարակում է իր աշխատությունը՝ կցելով նրան համապատասխան առաջաբան։ Ջնայած գրքում տեղ գտած առանձին թերություններին ու սխալներին, այն ամբողջությամբ վերցրած գրված է մարքսիստական դիրքերից և ցարական դրաքննությունն այն արգելել է հեղափոխական բովանդակության համար, իսկ հեղինակին դատական պատասխանատվության կանչել, որի հետևանքով Թ. Ավդալբեգյանն ստիպված վտարանդվել է Պարսկաստան։

Մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեի նախագահը Թիֆլիսի դատական պալատի դատախազի հասցեով ուղղված զեկուցագրում մանրամասն քաղվածքներ բերելով «Միքայել Նալբանդյան» գրքից հայտնում էր, որ «...Նալբանդյանի մասին իր հետազոտությունն հեղինակն ավարտում է հետևյալ եզրակացությամբ. «Աշխարհիս հզորների ջատագովը չեր Սիմեոն Մանիկյանը, այլ զրկվածների ու տառապյալների, յուր կյանքով ու մահով այս նոր Գրակքոսը հաստատեց, թե իրավունք ուներ յուր մասին գրելու այն տողերը, որոնք տպված են «Երկու տողի» մեջ.

---

27 Ա. Մ. Ինճիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն, Երևան, 1954, էջ 346։

28 Թադևոս Ավդալբեգյան, Միքայել Նալբանդյան. Պատմագրական վերլուծություն, երկրորդ տպագրություն, Երևան, 1928, էջ 8։

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ։

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից... Ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը, և նորան դարձյալ առանց և վայրկենական երկմտության նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաթուր կախված իրավունքը՝ է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ո՛չ բանտի և ո՛չ աքսորի առաշև, ո՛չ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»։

Օտարներից ու բարբարոսներից, այլև յուր հարուստներից ու հոգևորներից հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը երբեք չի մոռանա Կամիշինի նահատակին, որը թեև վաղ մեռավ, բայց երկար ապրելու է նրանց սրտում, որոնք երկրպագու են ժողովրդի բարօրության վսեմ իդեալին»։

«Այսպիսով,— եզրակացնում է մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեի նախագահը,— Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկի վերլուծության անվան տակ, «Միքայել Նալբանդյան» բրոշյուրի հեղինակը անց է կացնում գոյություն ունեցող պետական իրավական կարգի տեսակետից միանգամայն անհանդուրժելի հողի մասնավոր սեփականության իրավունքի ոչնչացման և հողի սոցիալիզացիայի թեորիան, կոչ անելով փոխել գոյություն ունեցող սոցիալական կարգը»։

Հայտնելով այս մասին, կոմիտեն խնդրում է դատական պալատից հարց հարուցել հաստատելու բրոշյուրի արգելումը, նրա ոչնչացումը և նրա հեղինակին ենթարկել դատական պատասխանատվության[29]։

Թ. Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան» գրքի «գործը» և նրա հեղինակի հետապնդումը շարունակվեց մոտ չորս տարի։ Միայն Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո նրա վրա դրված արգելքը վերացվեց։

Այսպիսով ցարական իշխանությունները խիստ հետապնդում էին ոչ միայն Մ. Նալբանդյանի գործերը, այլև բոլոր նրանց, ովքեր դրանք մեկնաբանում էին հեղափոխական մարքսիզմի դիրքերից։

1916 թ. մարտին Մ. Նալբանդյանի մահվան 50-ամյակի կապակցությամբ նրա մասին մի շարք հոդվածներ տպագրվեցին Թիֆլիսում լույս տեսնող սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթում, որն սկզբնական շրջանում (1915—1917 թ. մայիս) հիմնականում բոլշևիկյան ուղղություն ուներ և գտնվում էր Ս. Շահումյանի գաղափարական ազդեցության տակ։ Այդ հոդվածներն էին՝ «Ազատության գրված զինվորը» (առաջնորդող), «Միքայել Նալբանդյան» և Հ. Հակոբյանի «Ազատն աստված» հուշերը։ Թերթը գրում էր, որ Մ. Նալբանդյանը թափանցեց մասսաների սոցիալական թշվառության

29 «Միքայել Նալբանդյան», Վավերագրերի ժողովածու, Երևան, 1956, էջ 316—318։

որոշ պատճառների մեջ և ըմբռնեց այն ճշմարտությունը, թե հասարակական կյանքի հեղաշրջման տիրագլուխ դրդիչը տնտեսական կառուցվածքի այս կամ այն կողմն է...

«Թող մեր օրերի «ազգասերները», հայ «փրկիչները»,— նշում է «Պայքարն» իր առաջնորդողում,— տեսնեն՝ 19-րդ դարի մեր լուսամիտ վերածնի-չի և իրենց ազգասիրության միջև որպիսի ահռելի խորխորատ գոյություն ունի. տեսնեն, թե որն է մաքուր ազգասիրությունը, որ համընթաց կարող է լինել մարդասիրության հետ, և որն է այն ազգասիրությունը, որն իր արտա-հայտության մեջ մարդատյացության է հասնում...»։

Արժանվույնը մատուցելով ազատության մեծ մարտիկին, թերթը գրում էր. «Ժամանակակից գործունյա սերունդը երախտագիտությամբ կհիշե ան-կեղծ ժողովրդասիրության անձնազոհ Նալբանդյանին»[30]։

Այսպիսով, հենց հայ բոլշևիկ-լենինյանները հանդիսացան հայ մեծ հե-ղափոխական-դեմոկրատ, գրող ու մտածող Մ. Նալբանդյանի ժառանգության արժանի գնահատողները, նրա ձեռքից կարմիր արնաներկ հեղափոխական դրոշն ընդունողները։ Նրանք ոչ միայն ճիշտ գնահատեցին Մ. Նալբանդյանի տեղն ու դերը համառուսաստանյան ու հայ իրականության, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման մեջ, այլև վճռականորեն պաշտպանեցին նրա ժառանգությունը լիբերալ-բուրժուական, նացիոնալիստական քննադա-տությունից։ Նրանք Մ. Նալբանդյանի մեծությունը տեսան այն բանի մեջ, որ նա դեռևս XIX դ. 60-ական թվականներին իր բազմաչարչար ու մաքառող ժողովրդի ազատության հարցը կապեց ռուսական հեղափոխության հաղթա-նակի հետ և գալիք սերունդներին ավանդեց գնալ այդ դժվար, բայց միակ ճիշտ ու հերոսական ուղիով։ Մ. Նալբանդյանը հայ նացիոնալիզմի անհաշտ թշնամին էր, նրա մարտնչող քննադատն ու մերկացնողը։

Հայ բոլշևիկները՝ զինված մարքս-լենինյան ուսմունքով, քննադատորեն յուրացրին Մ. Նալբանդյանի գաղափարական ժառանգությունն ու գործնական պայքարը, այն սերտորեն կապեցին լենինիզմի, մեծ Հոկտեմբերի, հայրենիքի բախտի հետ։ Մ. Նալբանդյանի կյանքն ու գործը, նրա փայլուն անունը հայ մարքսիստների համար պայքարի զենք դարձան ընդդեմ ցարիզմի, նացիո-նալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության ու գաղափարախոսության։

«Ճշմարտության զինվորների և նոցա առաջնորդի անունները,— գրել է Մ. Նալբանդյանը,— վառվռուն աստղերի նման փայլելու են մշտնջենավոր ժամանակով, գալոց հայկական սերունդի աչքի առջև, նորա ժամանակակից պատմության հորիզոնի վրա»։

Ճշմարտության այդպիսի զինվոր ու առաջնորդ էր ինքը՝ Մ. Նալբանդյանը։

---

30 «Պայքար», 1916, № 13։

МИКАЕЛ НАЛБАНДЯН В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ МАРКСИСТСКОЙ МЫСЛИ
(дооктябрьский период)

ГЕВОРГ ГАРИБДЖАНЯН
Академик АН Арм. ССР

Резюме

М. Налбандян был боевым соратником русских революционных демократов. С его именем связан целый период истории армянской общественно-политической жизни и литературы, освободительной борьбы в 50—60-ых гг. прошлого столетия.

Первые армянские марксисты (Б. Кнунянц, С. Шаумян, А. Мясникян и др.) высоко оценили роль Налбандяна в общественно-политическом развитии армянского народа. Деятельность и научно-литературное наследие Налбандяна получили всестороннее освещение особенно в трудах А. Мясникяна.